

Ա. Թագաւորաց 3:9,10 (1 Samuel 3:9,10)

«Աստուծոյ մտիկ ընել»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 09.02.01

Այսոր հարցումներ ունինք թէ ինչ պիտի պատահի տնտեսութեան: Ինչ պիտի ըլլայ իմ ընտանիքիս վիճակը: Ինչ պիտի տեսնեմ – ուսխութիւն թէ տիրութիւն – հիւանդութիւն թէ առողջութիւն – մա՞հ թէ կեանք: Պիտի կրնա՞մ դիմագրաւել վաղը երբ այսօր հազիւ կրնամ տոկալ:

Այս առաւօտ կ'ուզենք հասկընալ ինչպէս մտիկ ընել և հետեւի Աստուծոյ առաջնորդութեամբ մեր կեանքի դժուարութիւններուն: Կարդա՛նք Ա. Թագաւորաց 3:9,10:

*«Ուստի Սամուէլին ըսաւ. «Գնա՛ պառկէ ու եթէ անգամ մըն ալ ղեզ կանչէ, ըսէ՛՝ Ո՛վ Տէր, խօսէ՛, քանզի քու ծառայ մտիկ կ'ընէ՛»: Սամուէլ գնաց իր տեղը պառկեցաւ: Տէրը եկաւ կայնեցաւ ու առաջին անգամներուն պէս՝ «Սամուէ՛լ, Սամուէ՛լ,» կանչեց ու Սամուէլ ըսաւ. «Խօսէ, Տէ՛ր, քանզի քու ծառայ մտիկ կ'ընէ»:»*

Յանախ անհամբեր կըլլամ երբ կարմիր լոյսի հանդիպիմ: Երբ կանանչ լոյսը բացուի, կառչաւեմ դէպի յաջորդ կարմիր լոյսը: Ես ինծի կ'ըսեմ – ինչո՞ւ այսօր կարմիր լոյս կայ – անապարել կենալ, կրկին անապարել ու կենալ: Կեանքն ալ կարծես անապարանք է, մենք ալ յանախ անապարանքի մէջ ենք:

Մեր աղօթքն ալ երբեմն նոյնպէս է: Անապարել, աղօթել, կրկին անապարել ու աղօթել: Կարն խնդրանքներ կ'ընենք՝ Աստուծոյ, օրինակ – «Տէր գիս պահէ՛, մինչ կանապարեմ.» «Տէր կացութիւնը փոխ՛է հանիս.» – «Տէր գիս առողջ պահ՛է, չեմ կրնար դանդաղիլ ու հիւանդանալ:» Առաւել՝ հոգեւոր ժողովի մէջ կ'ըսենք «Տէր գիս առաջնորդէ որ ղեզի ծառայեմ:»

Արդիօք պահ մը կը կենա՞նք որ Տիրոջ ձայնը լսենք: Էն կարեւոր պահը՝ – 'Ամէն՝ – ըսել է ետք՝ 15 վայրկեանն է: Եթէ Տիրոջ ձայնը կուզենք լսել, պէտք է լոնքն և գիւնք մտիկ ընենք:

4 անգամ Տէրը Սամուէլը կանչեց: 3 անգամ Սամուէլ շուարեցաւ: Ան կը խորհեր թէ գիտեր խօսողը: Վերջապէս Հեղի ֆահանայ օգնեց իրեն որ Տիրոջ պատասխան տայ: Սամուէլ այս ըսաւ, «Ո՛վ Տէր խօսէ՛, քանզի քու ծառայ մտիկ կ'ընէ:» Երբ Սամուէլ մտիկ ըրաւ, Տէրը խօսեցաւ: Աստուծոյ խօսքը շատ կարեւոր է ու բոլոր աշխարհը կը յեղաշրջէ՛:

Հոգեւոր կեանքի դժուար կէտերէն մէկը այս է՝ մտիկ ընել ու հասկնալ Տիրոջ ձայնը:

Լսած եմ որ Միսիոնար տիկին մը կ'աղօթէր, և վերջը լուռ կը սպասէր Աստուծոյ պատասխանին՝ ձեռքը թուղթ և մատիտ բռնած: Երբ Տէրը խօսէր, գրի կ'առնէր, և կը հնազանդէր:

Օր մը աղօթք ըրաւ և յիշեց դժուարութիւնը իր գործակիցին հետ և զգաց որ Տէրը իրեն կը'սէր որ թարմ հաւկիթ տանի գործակիցին: Ամչնալով հնազանդեցաւ, իր գործակիցը ընդունեց մեծ ուրախութեամբ, ըսելով թէ այս միայն ուտելիքն էր իրեն այդ օրուան համար. այսպէսով հաշտուեցան:

Եսայեայ 40:31, կըսէ, «Տէրոջը ապաւինողներուն ոյժը պիտի նորոգուի, և անոնք արծիւներու պէս թւերով վեր պիտի ելլեն, պիտի վազեն ու չթուլնան, պիտի ֆալեն ու չյոզնին:»

Մենք կուզենք արծիւի պէս թռչիլ, բայց կը տեսնենք որ ոյժ չունինք: Կուզենք վազել, բայց յոգնած կը զգանք: Կը ֆալենք և տկար կը զգանք: Եսայեայ մեզի կըսէ թէ նախ պէտք է Տիրոջ ապաւինինք և սպասենք Իրեն:

Տիրոջ ապաւինիլ և սպասել կը նշանակէ՝

1. Հանգչիլ - պէտք ունինք հանգչելու մարմնաւորապէս և հոգեպէս: Թուենք Իր օրհնութիւնները և տաղանդները որ մեզի տուած է: Այս բոլորը կրնանք Աստուծոյ տալ որ Իր կամքին համեմատ գործած'է մեզ:
2. Համբերութիւն - Մեր ոյժով և իմաստութեամբ շարժելու տեղ, թոյլ տանք որ Տէրը մեզ առաջնորդէ՛:
3. Ակնկալութիւն - Տէրը խոստացած է մեզ առաջնորդել, ուրեմն ակնկալէ՛ որ Տէրը քու ֆայերդ ուղղէ՛:

Երբ Տիրոջ կամփը կը փնտոենք յիշենք այս 3 կետերը և պիտի կարենանք լսել Իր ձայնը:

‘Pioneer 10 spacecraft’ը 1972’ֆին արձակուեցաւ դէպի երկինք, որպէսզի Jupiter մոլորակը քննէ: 1973ին ‘Pioneer 10’ը անցաւ Jupiter մոլորակէն և երբ 6 պիլիօն մղոն հեռու եր աշխարհէն ‘Pioneer 10’ը աշխարհ՝ նշաններ կը դրկէր այս տկար նշանները երկիր կը հասնինք 9ը ժամէն՝ հակառակ տիեզերքի ժխորին՝ այս տկար ձայնը կը լսուեր գիտնականներու կողմէն:

Աստուծոյ ձայնը որքա՛ն անելի զօրաւոր է այս տկար ձայնէն: Սակայն, մեր աղմուկին և անապարանֆին մէջ չենք լսեր զայն: Եթէ իսկապէս կուզենք որ Տէրը առաջնորդէ մեզ, պէտք է սորվինք լուռ կենալ և սպասել Աստուծոյ ձայնին:

Կուզեմ ձեզ յորդորել: Առէ՛ք ձեր Սուրբ Գիրքը և թուղթ ու մատիտ մը: Կարդացէ՛ք Իր խոստումները. ձեր խնդրանքները տուէ՛ք Իրեն: Եւ ապա՝ նստեցէ՛ք լուռ ու մտիկ ըրէ՛ք: Թող Տէրը խօսի ձեզի, և հնազանդեցէ՛ք Իրեն: